

Եւ քուրմեր են, վրեժի քուրմեր, եւ ահա
Անո՛ր, անո՛ր կը դիմեն:
Գործատունեն, թիարանեն, բանտերէն
Գըրոհ կու տան: Արիւնտ են եւ քաղցած:
Դեռ բեկորներ շըղթայի՝ զոր ջարդեցին,
Մերկ ոտքերուն հետ ընդքարշ
Սայատակին շըռինդ շըռինդ կը հընչեն:
Ոմանք սակրով, ոմանք մուրճով են զինուած.
Դեմքերուն վրայ արիւնռուշտ
Կը փայլակէ կատաղութիւնս՝ հեռուէն
Մերկացնելով մարգարտաշող կըճըրտումս
Ակռաներուն մարդու միսի անօթի:
Մերկ են կիներն իրենց ամբողջ ծիծերով,
Եւ մանուկները՝ բոպիկ՝
Որոնց տըժգոյն ճակատէն
Գարունն ընդհուպ կը թափթըփի վարդ առ վարդ
Դեռ չաւարտած իր բողբոջումը առոյգ:
Ատելութեան գոռուկոչ մ'է՛ կը պոռթկայ,
Կը տարածուի պողոտայէ պողոտայ
Քաղաքին մէջ բովանդակ:
Ամէն շըղթայ կը բեկտի,
Եւ կը փըլչի ամէն բանտ.
Յրապարակին մէջտեղ կրակի կը տըրուի
Կառափնարանն՝ հերոսներուն արիւնէն
Վարդակարմիր եւ ճարպոտ,
Եւ իր մեծ բոցն երկնուոր
Ամբոխներուն գիտակցութեան կ'ըլլայ ջահ:
Ամէն խըրճիթ ըմբոստ մը դուրս կը պոռթկայ,
Ամէն շիրմէ նահատակ մ'յաղթ կը յառնու
Նո՛ր միսով, նո՛ր ըղեղով, նո՛ր զէնքերով
Ըսպառազէն: Ժողովուրդն է հող կըրծող.